

Լիլիթ ՍԱՐՈՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՑՈՒՑԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել իսպաներենում ժամանակի ցուցայնություն արտահայտող գոյականների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: Այն նվիրված է գոյականների՝ որպես անվանման միջոցների դիտարկմանը, որտեղ, սակայն, վեր են հանվում և վերլուծության են ենթարկվում դրանց ոչ միայն, անվանողական, այլև ցուցայնական դրսևորումները: Լեզվի զարգացման արդի փուլում գոյականները՝ որպես ժամանակի արտահայտման բառային միջոցներ, հատկապես կարևորվում են հաղորդակցական գործընթացում առավել հակիրճ ձևով ժամանակային ցուցում իրականացնելու տեսանկյունից:

Բանալի բառեր. ժամանակ, գոյական անուն, հաղորդակցական ակտ, ցուցայնություն, ցուցայնական բառեր, ժամանակի ցուցայնություն, անվանողական գործառույթ, ցուցայնական գործառույթ

Ժամանակի բարդ հասկացությունը կապված է մարդկային գոյի և նրա աշխարհընկալման հետ, որն անմիջականորեն կապվում է մեզ շրջապատող իրականության և լեզվի մեջ այդ իրականության արտացոլման ժամանակային տեղայնացման և կողմնորոշման հետ:

Ժամանակի կարգն արտացոլման որոշակի ոլորտ չունի, և դրա մասին ցանկացած պատկերացում ձևավորվել է գիտակցական այլ ոլորտների ու կարգերի հարաբերությամբ:

Հաղորդակցական ցանկացած ակտի ժամանակ խոսքային իրադրության կարևոր նախապայմաններ են մասնակիցների, տեղի և ժամանակի առկայությունը և դրանց վերաբերյալ ցուցումն էլ, հենց ցանկացած լեզվում ապահովում է հաղորդակցման գործընթացը: Հետևաբար՝ յուրաքանչյուր լեզվում կան հատուկ միջոցներ, որոնք իրականացնում են այդ ցուցումը և լեզվաբանության մեջ համարվում են ընդհանրույթ, իսկ ցուցայնությունը՝ ընդհանրության կարգ:

Խոսքային գործառույթի հիմնական տարրերի մասին խոսելիս Ռ. Յակոբսոնը կիրառել է Օ. Յեսպերսենի եզրը՝ ցուցայնական տարրերը շիֆտերներ (shifters) անվանելով: Նա ձևակերպել է այս կարգը որպես լեզվի կողի տարրեր, որոնք պարտադիր հղում են պարունակում ցանկացած տեղեկության վերաբերյալ: Ըստ նրա՝ տիպիկ շիֆտերներ են անձնական դերանունները, Չ. Պիրսը կիրառել է «ինդեքս» եզրը, Ռասսելն անվանել է դրանք «եսակենտորն բառեր», Սմիրնիցկին այդ բառե-

րի ցուցայնական հատկությունն անվանել է «դերանվանականություն»: Ավելի ուշ ցուցայնությունն ուսումնասիրել են Չ. Ֆիլմորը, Ջ. Լայոնզը, Խ. Կ. Պերեսը, Ա. Ի. Սմիրնիցկին, Ա.Դ. Կացնելսոնը, Գ. Ջահուկյանը, Է. Աթայանը, Ե. Լ. Երզնկյանը և ուրիշներ:

Ցուցայնությունը բարդ հասկացություն է: Ցուցայնությունը՝ որպես անվանման միջոց, ի հայտ է գալիս հենց հաղորդակցման գործընթացում և դրա կարևորագույն տարրերից ու նախապայմաններից է: Պարզագույն հաղորդակցման գործընթացն անգամ իր մեջ ներառում է անվանում և ենթադրում է դրա առկայություն, քանի որ անվանումն ինքնին հենց առարկաների և երևույթների առաջնային ճանաչողական գործընթաց է:

Ցուցայնական բառային նշաններին բնորոշ առանձնահատկություններն ու դրանց կիրառման ուրույն նախապայմաններն առաջ են բերում ցուցայնական բառերի իմաստային բնութագրերի վերաբերյալ բազմազան դատողություններ:

Ցուցայնական բառերի իմաստների տարբերակումը մինչ օրս համարվում է վիճահարույց խնդիր, քանի որ դեռևս վերջնականորեն սահմանված չէ, թե բառիմաստի որ տարրերն են ձևավորում լեզվամիավորի ցուցայնությունը, որն է դրանց հարաբերական վերաբերությունը, ինչպես են կապակցվում հասկացության հետ, և թե ինչպես է ցուցայնությունը կապվում նշանակության հետ:

Ժամանակային հարաբերականության արտահայտչամիջոցների բազմակողմանի բնույթը թույլ է տալիս դիտարկել ցուցայնությունը՝ որպես գործառական-իմաստային կարգ, որը ենթադրում է լեզվակարգերի կազմավորման դաշտային սկզբունքի վերաբերյալ դրույթների բացահայտում: Այս առումով կարևորվում և խիստ արժևորվում է Ա.Վ.Բոնդարկոյի կատարած ուսումնասիրությունը, որը հիմնվելով Ի. Ի. Մեչչանինովի հասկացական կարգերի տեսության վրա, զարգացրել է լեզվի այսպես կոչված «դաշտային» կառուցվածքի գաղափարը և ներմուծել է գործառական-իմաստային կարգի հասկացությունը: Ինչպես գրում է Բոնդարկոն. «Գործառական-իմաստային կարգը արտահայտվում է լեզվում առկա ձևաբանական, շարահյուսական, բառակազմական և բառային միջոցներով, համատեքստային բազմազան միջոցների ընդհանրությամբ» /Бондарко, 1967: 21/:

Բոնդարկոյի ձևակերպմամբ՝ գործառական-իմաստային կարգի դասակարգման համար հիմք է ծառայում լեզվի տարբեր մակարդակների փոխազդող տարրերի իմաստային գործառույթի ընդհանրությունը, որոնք պատկանում են հասկացական միևնույն ոլորտին:

Ինչպես արդեն նշել ենք, խոսքի մեջ խիստ կարևորվում է ցուցայնության հիմնական կարգերից մեկը՝ ժամանակը, որը մեզ տեղեկություն է հաղորդում արտալեզվական որևէ գործողության, առարկայի, իրադարձության կամ իրողության ժամանակային տեղայնացման վերաբեր-

յալ: Ժամանակի ցուցայնությունը սովորաբար կողմնորոշվում է որոշակի պահի նկատմամբ, որը ժամանակային համակարգման կենտրոնն է. այն կարող է ցուցել ժամանակը խոսքային գործառույթի, խոսողի և խոսելու պահի հարաբերությամբ (ahora; hoy; hace tres días) կամ որոշակի տեքստի շրջանակներում ելակետի որևէ պահի հարաբերությամբ (el día siguiente; el día anterior):

Քերականական ժամանակաձևերը որոշակիացնում են ընդհանուր ժամանակային պլանը, որպես՝ անցյալ, ներկա, ապառնի գործողությունների ընդհանուր հարաբերություն: Ժամանակային հարաբերականություն արտահայտող բառային ցուցիչները, ի տարբերություն բայական միջոցների, ինչպես նշում են Գուլիգան և Շենդելսը, կոնկրետացնում են ժամանակային պլանը և գործողությունների հարաբերակցությունը: Դրանք, ուղեկցելով բային, որոշակիացնում են ժամանակի իմաստը: Ժամանակային հարաբերականության բառային ցուցիչները կարող են իմաստային առումով նույնիսկ ավելի ուժեղ լինել ժամանակային ձևից՝ չեզոքացնելով դրա իմաստը և տեղափոխելով այն մի ժամանակային ոլորտից՝ այլ ոլորտ /Гулыга, Шендельс, 1969: 42/:

Բառը՝ որպես օբյեկտիվ իրականության ազդանշան, ոչ միայն զուտ հասարակ անվանում է, այլ հոգեֆիզիոլոգիական իրողություն, որը մարդու համար ունի կարևոր նշանակություն: Այն առարկայական աշխարհից, տեսանելիից, շոշափելիից երկրորդ կարգի հեռացվածության, ապանյութականացման միջոց է /Уфимцева, 1980: 48/:

Բառերի միջոցով է իրականանում արտահայտման և հաղորդակցման գործընթացը: Յուրաքանչյուր բառ ունի միայն իրեն հատուկ իմաստ և կոչված է արտահայտելու որոշակի իրավիճակ, գործողություն, երևույթ կամ առարկա: Առանց բառի լեզու չկա: Բառերն ինքնին առանց քերականության լեզու չեն կազմում, սակայն, բառը լեզվական այն միակ միավորն է, լեզվական միակ կարգը, որը մարդկային գիտակցության մեջ գոյություն ունի անկախ նախադասությունից և այդ գոյությունը ոչ թե վերացական է, այլ իրական ու կոնկրետ, որպես առարկայի, հատկանիշի և այլնի անկախ հասկացություն ու դրա նյութականացած ձև: Բառը ինքնուրույն միավոր է և, որպես այդպիսին, ունի իր անկախ ձևը, որը միասնություն է կազմում դրա քերականական ձևերի հետ:

Բառի բացարձակ ձևն, ըստ Էդ. Ադայանի, միաժամանակ նաև բառաձևերի հարացուցային շարքի առաջին կամ ելակետային ձևն է: Այս դեպքում բառը լեզվաբանության մեջ կոչում են բառույթ: Դրանով տարբերակվում են բառի բացարձակ ձևը, որպես բառի անկախ ձև, և այդ նույն ձևը, որպես հարացուցային շարքի անդամ, որ արդեն հանդես է գալիս իբրև բառաձև: Իրենց նյութական ձևով բառերը հասկացությունների անվանումներ են: Հասկացությունների անվանումը բառի անվանողական դերն է և յուրաքանչյուր բառ, որը արտահայտում է հասկացություն ունի իր անվանողական դերը: Անվանողական դերը

պայմանավորված է նրանով, որ բառային տվյալ ձևը, ամրանալով այս կամ այն հասկացությանը, անվանում է այդ հասկացությամբ միավորված բազմաթիվ միատեսակ առարկաների կամ դրանց տեսակների, սեռերի և այլնի ամբողջ դասեր, և ոչ թե ամեն մի առարկա առանձին /Աղայան, 1984: 4-6/:

Ինչպես նշում է Շմելյովը. «Բառը և՛ իրականության նշան է, և՛ լեզվամիավոր, որն արտահայտում է ինչ-որ արտալեզվական մի երևույթ: Միևնույն ժամանակ այն կապված է լեզվի մյուս տարրերի հետ՝ որոշակի հարաբերություններով» /Шмелев, 1973: 16/:

Լեզվական նշանի մասին խոսելիս սովորաբար, բացահայտ կամ ոչ բացահայտ, նկատի է առնվում բառը, քանի որ, ինչպես նշել է Է. Աթալյանը. «Լեզվական միավորներից գիտակցության մեջ ամենից ավելի ամրակայվածը բառն է: Հասկացության և լսողական պատկերի մեկնաբանությունը իբրև նշանի նշանակվող ու նշանակող կողմեր, ստատիզմը, օբյեկտիվիզմը՝ սոսյուրյան համակարգը բնորոշող այդ բոլոր գծերը, ոչ թե խոսքային կամ լեզվախոսքային, այլ զուտ լեզվական նշանի գծեր են, որպիսին է, առաջին հերթին, առանձին վերցրած բառը» /Աթալյան, 1981: 78/:

Ինչպես հայտնի է, լեզվի մեջ բառերը դասակարգվում են որոշակի խմբերի մեջ՝ ըստ դրանց քերականական ընդհանրությունների, ըստ ձևաբանական ընդհանրությունների և, վերջապես, ըստ իմաստային ընդհարությունների:

Որոշ լեզուներում ցուցայնական բառերի իմաստային կառուցվածքում «ազգային» առանձնահատկությունների առկայությունը կախված է այն հանգամանքից, որ բառը ոչ թե մեկուսացված է, այլ հակառակը, այլ բառերի հետ մտնում է որոշակի իմաստային խմբերի մեջ /Ерзинкян, 1995: 66/:

Գոյական անունն ավանդական քերականության մեջ առաջին հերթին բնութագրվում է հենց իր առարկայական նշանակությամբ, որը դրա անվանողական գործառույթն է և համարվում է առաջնային:

Բառուղերի մեկնաբանմամբ, գոյականները պատկանում են անվանական բառերի դասին այն պատճառով, որ իրենց մեջ պարունակում են իրական աշխարհի առարկան կամ երևույթն անվանելու տարրը: Գոյականները, սակայն, ըստ Բաուդերի, հիմնականում բազմանշանակ են, և միայն որոշակի համատեքստում կարող է դրսևորվել դրանց այս կամ այն իմաստը /Баудер, 1982: 34/:

Ինչպես նշում է Կացնելսոնը, խոսքի մասերի այդ առաջնային նշանակությանը զուգահեռ բացահայտվում են նաև դրանց երկրորդական նշանակությունները, որոնք նույնքան կիրառելի են և կարևոր, որքան՝ առաջնայինները /Казнельсон, 1965: 155/:

Գոյականներն ունեն առարկայական նշանակություն, որն անժխտելի է, սակայն, բավականին մեծ թվով գոյականներ արտահայտում են ժամանակի իմաստ: Գոյականներն ունեն առարկայական նշանա-

կություն, որն անժխտելի է, սակայն, բավականին մեծ թվով գոյականներ արտահայտում են ժամանակի իմաստ:

Գոյականների անվանման գործառույթի առանձնահատկությունն այն է, որ դրանցում առկա է ինչպես ժամանակի ցուցայնության տարրը, այնպես էլ անվանման իմաստային տարրը.

preexistencia	existencia anterior con alguna de las prioridades de naturaleza u origen.
prerrafaelismo	arte y estilo pintóricos anteriores a Rafael de Urbino.
víspera	día que antecede inmediatamente a otro determinado especialmente si es fiesta.
actualidad	1. tiempo presente. 2. caso o suceso que atrae y ocupa la atención del común de las gentes en un momento dado.

Նշված բառերն անվանում են որոշակի երևույթ կամ իրադարձություն, ինչպես նաև ցուցում են դրանց ժամանակային պատկանելությունը: Իսպաներենում ժամանակային հարաբերականության իմաստային տարրը ներառող գոյականների գերակշիռ մասը կազմում են օբյեկտիվ կողմնորոշում: Այսինքն, դրանք կողմնորոշվում են մի այլ ելակետի հարաբերությամբ, որը խոսելու պահը չէ՝

antelación	anticipación con que, en orden al tiempo, sucede algo respecto a otra cosa.
propartida	tiempo que antecede inmediatamente a la partida.
antevíspera	día inmediatamente anterior al de la víspera.
preselección	selección previa.

Ուշագրավ է, այն որ իսպաներենում գերակշռում են կոնկրետ ցուցում իրականացնող գոյականները, ինչպես օրինակ.

antetítulo	titular secundario de un periódico que precede al principio.
prehistoria	período de la vida de la humanidad anterior a todo documento escrito y que solo se conoce por determinados vestigios.

Վերացական ցուցում իրականացնող գոյականները շատ քիչ են իսպաներենում, դրանց թվին են դասվում հետևյալ բառերը.

antelación	anticipación con que, enorden al tiempo, sucede algo respecto a otra cosa.
------------	--

- predecesor, ra
1. persona que precedió a otra en una dignidad, empleo o encargo.
 2. antecesor, ascendiente de una persona.

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ գոյականների մեջ գերակշռում են կոնկրետ ցուցում իրականացնող բառերը, մինչդեռ, ինչպես գիտենք, ցուցայնության բարձր աստիճան ունեն վերացական ցուցում արտահայտող բառերը: Թեև վերացական ցուցում արտահայտող բառերը նույնպես փոքր թիվ չեն կազմում, այդուհանդերձ, դա չի վկայում գոյականների ցուցայնության բարձր աստիճանի մասին, քանի որ դրանք հիմնականում ածականակերտ, մակբայակերտ, բայերից ածանցված գոյականներն են:

Կոնկրետ ցուցում արտահայտող գոյականները կազմվում են ածանցման միջոցով, բառակազմական հետևյալ եղանակով՝ pre- + s → S (prehistoria, prenatal):

Ուսումնասիրության հաջորդ փուլում քննության ենք առել իսպաներենում ժամանակային հարաբերականություն արտահայտող բառերի կառուցվածքում ժամանակի ցուցայնության տարրի դրսևորման և արտահայտման ձևերը: Ժամանակի ցուցայնության իմաստ արտահայտող գոյականների խմբի ձևաբանական քննությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ բառային այդ միավորներում առկա է կառուցվածքային բազմազանություն, քանի որ դրանցում առանձնանում են պարզ, ածանցավոր և բարդ բառեր:

Պարզ բառերում ժամանակի իմաստը (նախորդում, համընկնում, հաջորդում) արտահայտվում է հենց բառարմատի միջոցով, ներակա՝ առանց ձևային ցուցիչների՝ tarde, mañana, noche: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իսպաներենում ամենամեծ խումբը կազմում են ածանցավոր բառերը, որոնք կազմված են նախաձանցներով: Ածանցավոր բառերն արտահայտում են ժամանակային հարաբերականության իմաստը արտակա ձևով՝ ցույց տալով բառի իմաստային կապը ելակետի հետ: Ածանցման միջոցով կազմված բառերը իրենց կառուցվածքով արդեն իսկ արտացոլում են համապատասխան ժամանակային ցուցայնության իմաստը, այսինքն՝ դրանք փոխանցում են ցուցայնության իմաստն արտակա ձևով: Ինչպես, օրինակ՝ prenupcial, postguerra, prehistoria, ex- amante, coeditor, predecir և այլն:

Կան բառեր, որոնցում ժամանակային հարաբերականության իմաստն արտահայտվում է նախաձանցի իմաստի միջոցով՝ precautorio(ria), իսկ որոշ բառերում ցուցայնությունը ներառում է բառակազմական մոդելի իմաստը՝ posbélico:

Այսպիսով, իսպաներենում ուսումնասիրության արդյունքում առանձնացրել ենք ժամանակի ցուցայնության նախաձանցների որոշակի խումբ.

ante- (denota anterioridad en el tiempo y en el espacio), co- (con-), con- (significa reunión, cooperación o agregación), ex- (significa “fuera” o “más allá” con relación al espacio o al tiempo), pos- (post-), post- (significa “detrás de” o “después de”), pre- (significa anterioridad local o temporal, prioridad o encarecimiento), pro- (“ante” o “delante de”), proto- (significa “prioridad, preeminencia o superioridad”):

Նշված նախածանցները, համադրվելով բառերի հիմքի հետ, դրանց ցուցայնական բնույթ են տալիս: Այստեղ հարկ է նշել, որ դրանցում նույնպես դիտարկվում է իմաստային հակադրություն ժամանակային երեք հարթություններով: Օրինակ՝ ante-, ex-, pre-, pro-, proto- նախածանցներով (anteislámico, ex-estudiante, prematrimonial, progenitura, protomártir) արտահայտում են ժամանակային նախորդում: Այն բառերը, որ կազմվում են co-, con- նախածանցներով (costar, coagente, concanónigo) արտահայտում են ժամանակային համընկնում, իսկ pos-, post- նախածանցներով կազմված բառերը (posdiluviano, postoperatorio, postmeridiano) ցույց են տալիս ժամանակային հաջորդում:

Այստեղ հարկ է նշել, որ ex- նախածանցը բառարանում ներկայացված է որպես ժամանակի նախորդման իմաստ արտահայտող նախածանց, սակայն, օրինակներ գրեթե տրված չեն: Իրականում այն շատ արդյունավետ բառակազմական միջոց է, քանի որ բավականին մեծ թիվ են կազմում դրանով կազմված բառերը, որոնք խիստ կիրառելի են: Նախածանցների իմաստն առավել ընդհանրական բնույթ ունի, ի տարբերություն արմատ ձևայինների, քանի որ այն միայն որոշակիացնում է ելակետային հիմքի նշանակությունը: Նախածանցն, այդուհանդերձ, որոշակի հարաբերականություն է մտցնում, որը և ենթադրում է որոշակի ելակետ, ինչը խիստ կարևոր է ուսումնասիրվող բառերի համար:

Ժամանակի ցուցայնություն արտահայտող գոյականների քննությունը հնարավորություն է տալիս դիտարկել իսպաներենի նախածանցներն ըստ դրանց արտահայտած ժամանակային երեք իմաստների՝ նախորդում, համընկնում, հաջորդում:

Նախածանցների իմաստներ	
Նախորդում	ante-, ex-, pre-, pro-, proto-
Համընկնում	co-, con-
Հաջորդում	pos-, post-

Ինչպես կարելի է նկատել, տրված աղյուսակում նախորդման իմաստ պարունակող նախածանցների քանակից, գերակշռում են հենց նախորդման իմաստի գոյականները: Համընկնում արտահայտելու համար իսպաներենում արդյունավետ են co- և con- նախածանցները:

Հաջորդման իմաստն իսպաներենում արտահայտվում է pos- և post- նախածանցների միջոցով:

Հարկ է նշել, որ իսպաներենում վերջածանցները որևէ դեր չեն խաղում ժամանակային հարաբերականության կարգի արտահայտման տեսանկյունից: Վերը նշվածը բացատրվում է այն հանգամանքով, որ վերջածանցներով կազմված բառերում ժամանակի իմաստը բացահայտվում է ոչ թե ածանցի, այլ արմատ ձևային միջոցով, իսկ վերջածանցները զուտ խոսքիմասային բնույթ են կրում, ինչպես օրինակ՝ *anticipación, antelación, precaución* և այլն:

Ինչպես փաստում է մեր ուսումնասիրությունը, թեև ժամանակի արտահայտման մենաշնորհը ավանդաբար վերագրվել է բային, այդուհանդերձ, գոյականները նույնպես կարող են արտահայտել ժամանակ: Յուրաքանչյուր տեսանկյունից դրանք համեմատաբար թույլ են, քանի որ ցուցում են կոնկրետ ժամանակ և նախածանցների միջոցով, այդուհանդերձ, ժամանակի արտահայտման արդյունավետ միջոցներ են: Վերջիններս հնարավորություն են ընձեռում առանց ժամանակաձևեր և քերականական կառույցներ կիրառելու, հակիրճ ներկայացնել որևէ երևույթ կամ առարկա՝ միաժամանակ ցուցելով դրանց համապատասխան ժամանակը: Վերոհիշյալը հատկապես կարևորվում է էվոլյուցիոն ներկայիս փուլում, երբ տեխնոլոգիաների զարգացումն ու կյանքի ուժեղ թելադրում են առավել հակիրճ բովանդակային արտացոլում, որն իր անուղղակի ազդեցությունն է թողնում լեզվի վրա, որն իբրև իրականության անքակտելի մաս, դրան համընթաց գտնվում է մշտական փոփոխման և զարգացման մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթայան Է. Ռ. Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981:
2. Ադայան Էդ. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1984:
3. Баудер А. Я. Части речи – структурно-семантические классы слов в современном русском языке. Таллин: Валтус, 1982.
4. Бондарко А. В. К проблематике функционально-семантических категорий // *Вопросы языкознания*, N 2, 1967.
5. Гулыга Е.В., Шендельс Е.И. Грамматико-лексические поля в современном немецком языке. М.: Просвещение, 1969.
6. Ерзинкян Е. Լ. Дейксис как объект сопоставительного изучения языков // *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում*, N 1, գիտական աշխատությունների ժողովածու: Երևան, 1995:

7. Кацнельсон С.Д. Содержание слова, значение и обозначение. М.-Л.: Наука, 1965.
8. Уфимцева А.А. Семантика слова // *Аспекты семантических исследований*. М., 1980.
9. Шмелев Д.Н. Проблемы семантического анализа лексики. М.: Наука, 1973.
10. Diccionario de la Lengua Española, Madrid, Real Academia Española, 1994, (tomo I y II).
11. Diccionario de la Lengua Española, Madrid, Real Academia Española, 2001, (tomo I y II).

Л. САРОЯН – Об особенностях выражения временного дейксиса в системе имени существительного в испанском языке. – Целью данной статьи является изучение существительных как лексических средств выражения временной относительности в испанском языке. В результате исследования были выявлены структурные особенности и дейктические свойства существительных, которые указывают на временную локализацию предмета, действия, события и выявляются наряду с назывными компонентами слова.

Ключевые слова: время, имя существительное, коммуникативный акт, дейксис, дейктические слова, временной дейксис, номинативная функция, дейктическая функция

L. SAROYAN – On Typical Features of Time-Deictic Nouns in Spanish. – The paper goes along some peculiarities of nouns that denote temporal relations. It mainly aims at studying nouns as lexical means of expressing time deixis in Spanish. The research has revealed structural peculiarities and deictic characteristics of nouns indicating time localization. These peculiarities are revealed alongside with the naming functions of the abovementioned lexical units.

Key words: time, noun, communicative act, deixis, deictic words, time deixis, nominative function, deictic function